

ԵՍ ՈՒ ԹԱՏԵՐԱՍԵՐ ՊԱՏԱՆՈՒԿԻՆ

Posted on April 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելըս, 10 Ապրիլ 2022

Այն օրերուն, երբ հայ թատրոնը իր զարթօնքի գագաթին կը սաւառներ, երբ շաբաթավերջին առնուազն երկու թատերական ներկայացում կարելի էր վայելել, ես՝ այն պատանուհին էի, որ Էուֆեամբս կլանուած ու տարուած էի թատրոնով: Ամբողջ շաբաթը անհամբեր թատրոն կ'երազէի...: Թատրերգութեան անունը մտքիս մէջ կերպարներ կը ստեղծեր, բեմը թաւշեայ վարագոյրներ կը հագներ եւ բեմահարթակին ոտնաձայնները՝ լսողութիւնս կը շոյէր...:



Արդեօք ինչպէ՞ս տնտեսել այն փոքր գումարը, որ գրպանի ծախս (pocket money) կը կոչուէր, որուն անհրաժեշտութեան եւ սակաւութեան կը գիտակցէի, երբ թատրերգութիւն մը՝ Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ կը բեմադրուէր եւ երկրորդ մը՝ Գալուստ Կիւլպէնկեան թատերասրահին մէջ: Անկասկած, երկուքին ալ ներկայ պիտի գտնուէի: Մուտքի տոմսերը եւ ճանապարհածախսը ապահովելը, ինծի համար առաջնահերթ անհրաժեշտութիւն էր: Բախտաւորութիւն կը սեպէի, այն իրողութիւնը, որ Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահը՝ քալելով հասանելի էր ինծի, բայց Գալուստ Կիւլպէնկեանը, մեր տունէն՝ Հաճընէն, բաւական երկար ճամբայ էր...:

Նախապատերազմեան տարիները, մտքիս մէջ փայլուն պատկերներ են: Պէյրուօթի Թաղերուն մէջ, ռեհանի ու յասմիկի բոյրը՝ թոքերս կ'ուրախացնէին: Ամառնային արեւը՝ եթերային շողք կը բաշխէր: Ծովափին կապոյտը՝ հրաշքի գոյն ուներ: Լեռնային հովասուն ամարանոցները եւ ոսկեայ մայրամուտները՝ եղեմային տրամադրութիւն կը սփռէին: Երանի՛ կարենամ, իմ միտքիս ու հոգիիս մէջ խարսխուած Լիբանանը՝ իր իսկական, հարազատ պատկերով ու հմայքով նկարել: Իսկ սիրելի Լիբանանիս մէջ, ամենէն փայլուն իրողութիւնը՝ հայ թատրոնն էր:

Հանրակառքերը օրինաւոր կայաններ ունէին, ետեւ-ետեւի, շուտ-շուտ կը հասնէին՝ փոխադրելու համար թատրոն ժամանող ու վերադարձող մեծաթիւ հանդիսատեսները: Թատրոնէն արձակուող՝ հայահոծ բազմութիւնը, մասնաւորաբար ուսանողները, տեղաւորուելու համար, շարան մը հանրակառքերու կարիքը կ'ըլլար: Կը յիշեմ այդ օրերուն ազնուագոյն (elite-ընտրանի) հայուհիները, իրենց կենցաղով եւ հագուածքով՝ թատրոնին հանդէպ, իրենց յարգանքը կ'արտայայտէին : Ակնառու էին՝ հագուստները եւ

գարդեղենները, փայլուն եւ վառ գոյներով, որոնք նախորդ սերունդին՝ մոայլ գոյներուն կը հակասէին: Սիրուն ժպիտները, անուշահոտներուն հետ միաձուլուած, զգլխիչ ամպեր կը ստեղծէին...:

Ես ու ընկերուհիս՝ Արփին, հանրակառքով եւ ամենայն ճշդապահութեամբ կը հասնէինք թատրոն, իսկ ի՞նչ միջոցով վերադառնալը, կախեալ էր՝ մեր գրպանի ծախս կոչուածէն...: Ընդհանրապէս կը «նախընտրէինք» քալելով վերադառնալ...: Այսօրուան պահանջկոտ պատանիները չէինք. կարիքը չունէինք բացատրութեան, թէ մեր ծնողներէն ինչքա՞ն պէտք էր խնդրէինք: Բնագոյով՝ ամէն բան գիտէինք...:

Բեմադրուող թատերախաղերը՝ կախարդական գաւազանի մը նման, մեր պատանի հոգիները կը յուզէին, ներաշխարհը կը լիացնէին եւ տիպար մարդը կը ձեւաւորէին: Ամէն մէկ թատերախաղէն կերպար մը կ'որդեգրէի եւ հարազատ ինքնութեամբ կ'ապրէի գայն:



(Ձ-Ա) Ճորճ Սարգիսեան, Գրիգոր Սաթամեան, Պերճ Ֆազլեան և Վարուժան Խտըշեան

1973-74 կրթական տարեշրջանը՝ իմ դպրոցական տարիներուն, ամենէն յիշատակելին էր: Թէպէտեւ բեմը եւ ասմունքը միշտ ալ անբաժան բարեկամներս էին, բայց այդ տարին հանդէս գալը՝ բաւական երկար թատերական կտորով մը, այլ փորձառութիւն մըն էր: Բնա՛ւ չէի պատկերացներ, որ մեր դաստիարակը Օրդ. Տիգրանուհի Մելիքեան՝ մանրակազմ ուսուցչուհին, որ մարմնամարզութիւն եւ կենսաբանութիւն կը դասաւանդէր, կրնար նաեւ մեծ եռանդով ու բժախնդրութեամբ բեմ բարձրացնել Յակոբ Բշիկեանի (՞) «Արդիականութիւն» թատերախաղը: Գլխաւոր դերը ստանձնելու առաջարկը, առանց տատամսելու եւ մեծ հաճոյքով ընդունեցի: Իմ ու սիրելի դասընկերներուն խաղարկութեամբ արժեցուցինք Օրդ. Մելիքեանին աշխատանքը: Մեր համոզիչ դերակատարութեամբ, գեղեցիկ տարազներով եւ բեմի յարդարանքով, յաջողեցանք արդիականութեան բարի ու յոռի կողմերը ծանօթացնել հանդիսատեսին: Օրին, շարք մը այլ հայկական վարժարաններու մէջ՝ հանդէս եկանք մեր

Թատերասիրով: Ծափահարությունները եւ շոյլ գնահատականները մեր ցանկացած պարզեւներն էին:

Հօրս ցանկութիւնն էր, որ հիւանդապահութիւն ուսանիմ եւ կամ տարրալուծարանային գիտութիւն, բայց ես արբեցած իմ թատերասիրութեամբ, որոշած էի իմ կեանքիս ուղղութիւնը եւ նպատակը: Յստակ գիտեի թէ ի՞նչ պիտի հետապնդեմ: Ոչի՛նչ, բացի նուիրուիլ թատերաբեմին:

1975-ին չսպասուած պատերազմը, հռթիրներուն տեղատարափը, ընտանիքիս մէջ կատարուած դժբախտութիւնը եւ յաջորդող տարիներուն ծանրութիւնը, նման էին մի քանի արարներով բեմականացուող ողբերգութեան: Յաւօք սրտի թատերական աւարտը իմ թերաւարտ երազներս էին...: Ինքզինքս այլեւս բեմին վրայ չէի տեսներ, հոգ չէ, որ բեմը մի՛շտ ալ սրտիս մէջ էր...:

Բարեբախտութիւն էր այն իրողութիւնը, որ հակառակ երկարամեայ պատերազմին, հայ թատերաբեմը չամայացաւ: Բիւր յարգանքի արժանի Լիբանանի բեմադրիչները, որոնք պատերազմին ամենէն տազնապալի օրերուն, թատերական ներկայացումներ բեմ հանեցին : Նոյնպէս ալ դերակատարները, որոնք կամաւորաբար հայ բեմին ու արուեստին իրենց բարի տուրքը տուին:

Բոլոր թատերական ներկայացումներուն կ'ուզէի ներկայ ըլլալ անխտիր: Բոլոր բեմադրիչները շատ կը յարգէի, բայց Վարուժան Խտըշեանը իմ նախասիրած բեմադրիչ - դերասանս էր: Բեմին վրայ իր տարբեր կշիռն ու հմայքը ուներ: Իր բեմադրած գործերը, հայկական թատերախաղերու կողքին, համաշխարհային ճանաչում ունեցող թատերագիրներու գործերն էին: Արթըր Միլլըրի, Նիլ Սայմընի նման, որոնք հմուտ են դէպքերը հարազատօրէն ներկայացնելու , մարդկային ներաշխարհը թափանցելու եւ հոգեկան ապրումները վարպետօրէն բացայայտելու: Կրնամ ըսել, որ Վարուժան Խտըշեանը Նիւ Եօրքի Պրօստուէրը՝ Պուրճ Համմուտ բերաւ:



**Երեւան ուսանած երիտասարդ դերասան-բեմադրիչներ որոնք
Եօթանասուներկան թուականներուն ճոխացուցին լիբանանահայ թատրոնը:
(2-Ա) Լուրճի Թապագեան, Օննիկ Գանթարճեան,
Յարութ Երեցեան եւ այլք**

Թող մէկը չհամարձակի ըսել եւ կամ համոզել, թէ հանրութիւնը «ծանր» կամ «լուրջ» թատերախաղերը չի՛ սիրեր ու չի՛ գնահատեր: Թատրոնը ի՛նք պիտի ձեւաւորէ հանրութեան ճաշակը, ո՛չ թէ հանրութիւնը «սահմանէ» թատրոնը:

Այսօր համավարակին պարտադրած կղզիացումը մեծ աւեր պատճառեց արուեստին ու մշակութային կեանքին: Օրէ օր աւելի տեղեակ կը դառնանք, թէ ինչպիսի՞ բաներու կը ծարաւի մեր հոգին...: Այսօր կ'ուզեմ լաւատեսութեան պատկեր մը կախել դիմացս ու կրկին տեսնել իմ փայլուն Լիբանանս, իր հանրակառքերով, թատերասրահներով, արուեստասեր հանրութիւնով ու ինծի նման թատրոնով հմայուած՝ քալող - վազող, մեծաթիւ պատանուհիներով:



Comments



Roupén Dekmezian – 2022-04-16 23:41:40

Silva Jan: Marvellous writing reminiscent of our great literary figures. I savor every article in Western Armenian (with no non-Armenian words) which is so beautiful and evokes nostalgia of the incredible culture-rich few decades we had in Lebanon. Not as much as you seem to have, I used to go to many of the "dramas" which I don't think were financially self sustaining. Were they subsidized, making you wonder who the benefactors were? I often boast to the younger and non-Lebanese Armenians about how rich a culture we created in Lebanon in a span of few decades only to see it wither away irretrievably, in no time. In contrast, no other diaspora community (including the Iranian Armenians of 400 years) has experienced anything near ours. On a funnier side, do you remember when "The Odd Couple" was translated into Armenian as the "Gojad (as opposed to even) Couple"? I guess it's forgivable. Please keep writing. Roupén Dekmezian, Houston, Texas
ps: I apologize I cannot type in Armenian and my diction is nowhere near yours. Did you enrol in "Hayakidagan"?